

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս ոչ ռեզիդենտ կազմակերպություններից ստացված խորհրդարկական ծառայությունների դիմաց կատարված ծախսերը համախառն եկամտից ի՞նչ չափով են նվազեցվում:

Պատասխան

ԼՂՀ կառավարության 19.06.2001թ. N 168 որոշման 3-րդ կետի «Ժ» ենթակետի համաձայն՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված խորհրդատվական ծառայությունների ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են հաշվետու տարվա համախառն եկամտի 2 տոկոսը չգերազանցող գումարի չափով:

Հարց

Գործատուի միջոցների հաշվին վճարված դրոշմանիշային վճարները նվազեցվո՞ւմ են, արդյոք, հարկվող շահույթը որոշելիս:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս գործատուի միջոցների հաշվին վճարված դրոշմանիշային վճարները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա՞ են, արդյոք, վարձու աշխատողներին աշխատանքից ազատման դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով վճարվող արձակման նպաստները և չօգտագործված արձակուրդների համար փոխհատուցման գումարները:

Պատասխան

Այո: «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ծախսերի թվին են դասվում աշխատանքից ազատման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին վճարվող արձակման նպաստները և չօգտագործված արձակուրդների համար փոխհատուցման գումարները:

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների օտարումից եկամույրը ինչպե՞ս է հաշվարկվում:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 42-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ բացառությամբ բռնագրավման, նվիրատվության կամ այլ ձևով պետությանը օտարման դեպքերի, ռեզիդենտների հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների (այսուհետ՝ շենք) օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից (այսուհետ՝ կադաստրային արժեք) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն: Ընդ որում՝ ռեզիդենտի կողմից շենքն այլ անձին (/ոչ/ ռեզիդենտ կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) կադաստրային արժեքից ցածր գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) վաճառքի դեպքում՝

- վաճառող ռեզիդենտի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի չափով, որից նվազեցվում է շենքի մնացորդային արժեքը, ինչպես նաև ռեզիդենտի մոտ այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը:

- գնորդ ռեզիդենտ կազմակերպության մոտ շենքի սկզբնական արժեքը որոշվում է կադաստրային արժեքով, իսկ շենքի կադաստրային արժեքի և փաստացի ձեռքբերման գնի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը որպես ներված պարտավորություն ներառվում է համախառն եկամտի մեջ: Նշված դրույթները չեն կիրառվում, եթե շենքի օտարման գործարքի կողմ է հանդիսանում պետությունը (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ իրավաբանական անձի միջոցով) կամ շենքն օտարողը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը:

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս անհատույց ստացված դրամական միջոցները ե՞րբ են ճանաչվում որպես եկամուտ:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատույց ստացված դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հաշվետու տարում, բացառությամբ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցների, որոնք եկամուտ են համարվում այն հաշվետու տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս՝ անկախ այդ ծախսը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հաշվետու տարում:

Հարց

Ինչպե՞ս են արտացոլվում անվավեր ճանաչված գործարքները շահութահարկի հաշվարկում:

Պատասխան

Անվավեր ճանաչված գործարքներից ստացվող եկամուտները արտացոլվում են շահութահարկի հաշվարկի 1-ին բաժնի 20-րդ կետում (այլ եկամուտներ), իսկ գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին վերադարձվող միջոցների գումարը՝ շահութահարկի հաշվարկի 2.1-ին բաժնում (ժամանակաշրջանի ծախսեր):

Հարց

Շահութահարկով հարկման առումով գույքագրման ժամանակ բացահայտված հիմնական միջոցների ավելցուկը ներառվո՞ւմ է, արդյոք, համախառն եկամտի մեջ:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «իգ» կետի համաձայն՝ շահութահարկով հարկման առումով եկամուտների թվին են դասվում՝ գույքագրման (այդ թվում՝ ստուգման) ժամանակ բացահայտված հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և այլ գույքի ավելցուկը, իսկ հարկատուի կողմից տիրազուրկ գույքի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ՝ դատարանի որոշումների հիման վրա) իր իրավունքների

ճանաչման դեպքում՝ տիրագուրկ գույքը: Գույքի ավելցուկը, տիրագուրկ գույքը գնահատվում է տվյալ հարկատուի մոտ առկա համանման արժեքով, իսկ այդ արժեքի բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով, որը ձևավորում է այդ գույքի սկզբնական (ձեռքբերման) արժեքը և համախառն եկամտի մեջ ներառվում է ամբողջությամբ տվյալ (գույքի ավելցուկի դեպքում՝ ավելցուկի հայտնաբերման, իսկ տիրագուրկ գույքի դեպքում՝ իրավունքների ճանաչման) հաշվետու ժամանակաշրջանում:

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցի լուծարման դեպքում այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը ենթակա՞ է, արդյոք, նվազեցման համախառն եկամտից:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ հոդվածի 1-ին մասի և Հաշվապահական հաշվառման ստանդարտ 16-ի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս լուծարվող հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ:

Հարց

Կազմակերպության շահութահարկը հաշվարկելիս արտադրական նշանակության շենքի ամորտիզացիոն հարկացումները ինչպե՞ս պետք է նվազեցվեն համախառն եկամտից, եթե շենքի մի մասը վարչական նշանակությամբ է օգտագործվում. նախատեսված են սենյակներ կառավարման ապարատի համար:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ նույն հոդվածով սահմանված ժամկետներում:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան, իսկ վարչական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են: Ընդ որում, վարչական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում: Արտադրական նշանակության շենքի մի մասը վարչական նշանակությամբ օգտագործելու պարագայում, ամորտիզացիոն մասհանումների չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են՝ հաշվի առնելով համապատասխան սենյակների մակերեսի տեսակարար կշիռը:

Հարց

ԱՀ ռեզիդենտ կազմակերպությունը ոչ ռեզիդենտ կազմակերպությանը եկամուտ է վճարում արտարժույթով: Ո՞ր օրվա միջին փոխարժեքն է հաշվի առնելու:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 55-րդ և 62-րդ հոդվածներին համապատասխան՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ ոչ ռեզիդենտի շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնում է հարկային գործակալը, որը հաշվարկվում է՝ ոչ ռեզիդենտին եկամուտների փաստացի վճարման պահին միջին փոխարժեքից ելնելով:

Հարց

Համարվում են արդյոք որպես նվազեցվող ծախս կամ հարկվող եկամուտ արտարժույթի փոխարկման գործարքներ իրականացնելիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված օրվա միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեք կիրառելու դեպքում առաջացած տարբերությունները:

Պատասխան

Հարկվող շահույթը որոշելիս արտարժույթի փոխարկման գործարքներ իրականացնելիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված օրվա միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեք կիրառելու դեպքում առաջացած տարբերությունները (դրական կամ բացասական) դիտվում են որպես հարկվող եկամուտ կամ նվազեցվող ծախս: Ընդ որում՝

–Արտարժույթ ձեռք բերողի մոտ դրական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» > 0) ներառվում են համախառն եկամտի, իսկ բացասական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» < 0) ներառվում են համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ:

–Արտարժույթ վաճառողի մոտ բացասական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» < 0) ներառվում են համախառն եկամտի, իսկ դրական տարբերությունները («Միջին փոխարժեք» - «Փաստացի կիրառված փոխարժեք» > 0) ներառվում են համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ:

Հարց

Եկամտի վճարման աղբյուրի մոտ ոչ ռեզիդենտի շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնելիս ինչպիսի՞ փոխարժեք է կիրառում հարկային գործակալը:

Պատասխան

Ոչ ռեզիդենտին եկամուտների փաստացի վճարման պահին գործող ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքից ելնելով, իսկ ոչ ռեզիդենտի կողմից դուրս գրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերի և հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսաթվերի միջին փոխարժեքներով հաշվարկված ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների միջև առաջացած տարբերությունը վերագնահատման արդյունք է, որը հաշվի չի առնվում շահութահարկը հաշվարկելիս:

Հարց

Խոհարարական արտադրանքի պատրաստումն ու առաքումը հարկման ի՞նչ համակարգով է հարկվում:

Պատասխան

Խոհարարական արտադրանքի պատրաստումն ու առաքումը հարկվում է ընդհանուր հարկման համակարգով՝ ավելացված արժեքի հարկով և շահութահարկով (եկամտային հարկով):

Հարց

Կազմակերպությունը օգտվո՞ւմ է, արդյոք, հարկային արտոնություններից հաշմանդամ վարձու աշխատողներ ունենալու դեպքում:

Պատասխան

ԱՀ հարկային օրենսդրությամբ հաշմանդամների մասով արտոնություն սահմանված է միայն «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածով, համաձայն որի հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով:

Հարց

Դեբիտորական պարտքը դադարանի վճռով անհուսալի ճանաչվելու դեպքում չպահուստավորված դեբիտորական պարտքը կարո՞ղ է նվազեցվել հաշվետու տարվա հարկվող շահույթից:

Պատասխան

ԼՂՀ կառավարության 08.07.2003թ. թիվ 205 որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի համաձայն՝ մինչև դեբիտորական պարտքի կետանցված դառնալու օրվանից 366-րդ օրը լրանալը սահմանված կարգով անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերը դուրս են գրվում անհուսալի դառնալու հաշվետու տարում և չպահուստավորված դեբիտորական պարտքը *որպես նվազեցում* հաշվի է առնվում կազմակերպության հաշվետու տարվա հարկվող շահույթը (վնասը) որոշելիս:

Հարց

Առևտրային կազմակերպության կողմից ոչ առևտրային կազմակերպությանը բարեգործական նպատակներով փոխանցված դրամական միջոցների մասով ինչպիսի՞ հարկային պարտավորություններ են առաջանում:

Պատասխան

Առևտրային կազմակերպության կողմից ոչ առևտրային կազմակերպությանը բարեգործական նպատակներով փոխանցված դրամական միջոցները, «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքների համաձայն, ԱԱՀ-ի և ավտոճանապարհային մասհանումների հարկման օբյեկտ չեն հանդիսանում: «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ առևտրային կազմակերպության հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25 տոկոսի չափով:

Հարց

Գործուղման մեջ գտնվելու ո՞ր օրերի համար է վճարվում օրապահիկը:

Պատասխան

ԼՂՀ կառավարության 19.06.2001թ. N 168 և 28.03.2006թ. N 164 որոշումների համաձայն՝ օրապահիկը վճարվում է աշխատողի գործուղման մեջ գտնվելու օրացուցային օրերի (ներառյալ՝ գործուղում մեկնելու և վերադառնալու օրերը) համար:

Հարց

Կազմակերպության կողմից այլ կազմակերպության հետ կնքված պայմանագրի որոշ դրույթների չկատարմամբ առաջադրված փուլերը ենթակա՞ են, արդյոք, նվազեցման համախառն եկամտից:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպության կողմից քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (տնտեսական պայմանագրերի պայմանները խախտելու) համար առաջադրված տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները հարկվող շահույթը որոշելիս ենթակա են համախառն եկամտից նվազեցման:

Հարց

Հաշվի՞ են առնվում, արդյոք, նախորդ 3 տարիների հարկային վնասները, եթե այդ վնասները առաջացել են բացառապես գյուղատնտեսական գործունեությունից, որն ազատված է շահութահարկից:

Պատասխան

Այո, քանի որ գյուղատնտեսությանը վերաբերող շահութահարկի արտոնությունը շահութահարկի նվազեցման արտոնություն է, ինչը նշանակում է, որ հաշվարկվում է համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունը և հարկվող շահույթ առաջանալու դեպքում դրա նկատմամբ հաշվարկված շահութահարկը նվազեցվում 100%-ով, իսկ հարկային վնաս առաջանալու դեպքում հարկային վնասը փոխանցվում հաջորդ 3 տարիներ:

Հարց

Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը հիմնական միջոցի՞ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը գերազանցելու դեպքում ինչպե՞ս է կատարվում դրանց ամորտիզացումը:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ եթե հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան հինգ տարվա ընթացքում: Եթե հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է հինգ տարուց պակաս, ապա այդ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են այդ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում:

Օրինակ.

Հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքը կազմում է 12.0 մլն դրամ, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 9.6 մլն դրամ և հաշվեկշռային արժեքը՝ 2.4 մլն դրամ (12.0-9.6): Հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 10 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետի չափով): Հիմնական միջոցի վրա կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր (2015թ. հուլիսի 15-ին կազմված կատարողական ակտի հիման վրա) 3.6 մլն դրամի չափով:

Տվյալ դեպքում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են այդ հիմնական միջոցի 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքին և հիմնական միջոցը ամորտիզացվում է 5 տարվա ժամկետում:

2015թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված ամորտիզացիան ամսական կազմում է 0.1 մլն դրամ (12.0:10:12), իսկ դրանց հանրագումարը՝ 0.6 մլն դրամ (0.1*6): 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) հիմնական միջոցի հաշվեկշռային (մնացորդային) արժեքը կազմում է 1.8 մլն դրամ (2.4-0.6), իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 1.5 տարի:

2015թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0.09 մլն դրամ ((1.8+3.6):5:12), իսկ դրանց հանրագումարը 0.54 մլն դրամ (0.09*6): Ընդամենը տարեկան ամորտիզացիան կազմում է 1.14 մլն դրամ (0.6+0.54):

2016-2019թթ. համար տարեկան ամորտիզացիան կազմելու է 1.08 մլն դրամ ((1.8+3.6):5), իսկ 2020թ. հունվար-հունիս ամիսների համար՝ 0.54 մլն դրամ ((1.8+3.6):5:12*6):

Այսպիսով, հիմնական միջոցը լրիվ ամորտիզացվում է 13.5 տարում (մինչև կապիտալ բնույթի ծախսի կատարումը հաշվառված ամորտիզացիոն ժամկետի (8.5 տարի) և 5 տարվա հանրագումար):

Նույն օրինակում, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ լրիվ ամորտիզացված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կամորտիզացվեն 5 տարում:

Հարց

Ոչ ռեզիդենտի հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում ԱՀ ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին վճարվել են տուգանքներ: ԱՀ ռեզիդենտը որպես հարկային գործակալ կրու՞մ է արդյոք շահութահարկի պահման և բյուջե փոխանցման պարտավորություն:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 51-րդ և 55-րդ հոդվածների համաձայն՝ տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների տեսքով եկամուտները դասվում են ԱՀ աղբյուրներից ստացված այլ եկամուտների թվին, որից ԱՀ ռեզիդենտը պետք է պահի և բյուջե փոխանցի շահութահարկ՝ 10% դրույքաչափով:

Հարց

Շահութահարկով հարկման առումով վերադարձվող տարայի արժեքը ներառվու՞մ է, արդյոք, համախառն եկամտում:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն շահութահարկով հարկման նպատակով վերադարձվող տարայի արժեքը չի ներառվում այդ տարայով իրացվող ապրանքներ (արտադրանք) վաճառողի եկամուտների մեջ, եթե ապրանքների իրացման համար հիմք հանդիսացող սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում

առանձնացված է այդ ապրանքների (արտադրանքի) համար օգտագործված վերադարձվող տարան (քանակը և արժեքը) և դրա դիմաց չի նախատեսվում որևէ հատուցում:

Հարց

Անհատույց ստացված հումքը ի՞նչ արժեքով է մուտքագրվում կազմակերպություն և ինչպիսի՞ հարկային պարտավորություններ են առաջանում:

Պատասխան

Ընկերության կողմից անհատույց ստացված հումքը մուտքագրվում է ընդունման-հանձնման փաստաթղթերի տվյալներով, և եթե այդ փաստաթղթերում նշված չէ գույքի արժեքը, ապա այն գնահատվում է տվյալ ռեզիդենտի մոտ առկա համանման գույքի արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ ռեզիդենտի մոտ ձևավորված հանձնաժողովի կողմից իրականացված փորձաքննության եղանակով որոշված արժեքով: Ընդ որում, «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, անհատույց ստացված հումքը ընկերության համար եկամուտ է համարվում այն հաշվետու տարում, երբ այն ճանաչվում է որպես ծախս կամ կորուստ (անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից):

Օրինակ, 2016 թվականի ընթացքում ընկերությունը անհատույց ստացել է 1000.0 հազար դրամ արժեքով հումք: Նույն հաշվետու տարում այն ամբողջությամբ օգտագործվել է ներքնակների արտադրության համար, որոնց իրացումից հասույթը կազմել է 1600.0 հազար դրամ (առանց ԱԱՀ-ի): Ընկերության կողմից տվյալ տարվա ընթացքում կատարված ընդհանուր նվազեցման ենթակա ծախսերը (ներառյալ հումքի 1000.0 հազար դրամ արժեքը) կազմել են 1400.0 հազար դրամ:

Տվյալ պարագայում ընկերության հաշվետու տարվա հարկվող շահույթը կկազմի 1200.0 հազար դրամ (1600.0 հազ. դրամ+ 1000.0 հազ. դրամ (անհատույց ստացված հումքի արժեք) – 1400.0 հազ. դրամ):

Հարց

Դեբիտորական պարտքը ե՞րբ է ճանաչվում անհուսալի:

Պատասխան

ԼՂՀ կառավարության 2003թ. հուլիսի 8-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» թիվ 205 որոշման համաձայն՝ դեբիտորական պարտքը ճանաչվում է *անհուսալի՝*

ա) կետանցված դառնալու 366-րդ օրվանից, եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը չի գերազանցում 100 հազար դրամը, կամ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճռի առկայության դեպքում, եթե տվյալ դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը գերազանցում է 100 հազար դրամը,

բ) պարտապանի՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անվճարունակ (սնանկ) ճանաչվելու կամ պարտապան կազմակերպության լուծարվելու (պարտապան ֆիզիկական անձի մահվան) դեպքերում՝ անկախ պարտքի մարման ժամկետից:

Հարց

Կրեդիտորական պարտքի ներման դեպքում, ներված գումարի չափով ավելացվո՞ւմ է, արդյոք, կազմակերպության հաշվետու տարվա համախառն եկամուտը:

Պատասխան

Կրեդիտորական պարտքի ներման կամ այլ ձևով պարտքը չպահանջելու վերաբերյալ պարտատիրոջ որոշման և (կամ) համաձայնության կամ երրորդ անձին պարտքի անհատույց փոխանցման դեպքում՝ ներված կամ անհատույց փոխանցված գումարի չափով ավելացվում է կազմակերպության հաշվետու տարվա համախառն եկամուտը, եթե մինչ այդ այն չի դիտվել որպես անհուսալի:

Հարց

Դուրս գրված հիմնական միջոցի ոչնչացման դեպքում տվյալ հիմնական միջոցի չամորտիզացված մնացորդը ենթակա՞ է արդյոք նվազեցման համախառն եկամտից:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ դուրս գրված հիմնական միջոցի ոչնչացման դեպքում տվյալ հիմնական միջոցի չամորտիզացված մնացորդը շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ:

Հարց

Որոշակի տարեկան տոկոսադրույքով տրամադրված փոխառության գծով եկամտի (տոկոսի) ստացման իրավունքը ե՞րբ է համարվում ձեռք բերված:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 42-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ որոշակի տարեկան տոկոսադրույքով տրամադրված փոխառության գծով եկամտի (տոկոսի) ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված փոխառության ժամկետը լրանալու պահից, իսկ եթե փոխառության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան:

Հարց

Հաշվեդուր տարում եկամուտ չստանալու դեպքում նվազեցվո՞ւմ են արդյոք վարչական և ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հարկատուի գործունեության հետ կապված վարչական և ֆինանսական ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում:

Հարց

Հիմնական միջոցի լուծարման արդյունքում հետագա օգտագործման կամ վաճառքի համար առանձնացված ընթացիկ նյութական ակտիվների կամ այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքը ինչպե՞ս է որոշվում:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ հիմնական միջոցի լուծարման արդյունքում հետագա օգտագործման կամ վաճառքի համար առանձնացված ընթացիկ նյութական ակտիվների (նյութեր, դետալներ, պահեստամասեր, բլոկներ և համանման մասեր) կամ այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է տվյալ հիմնական միջոցի

սկզբնական (ծեռքբերման) արժեքի ձևավորման ժամանակ այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի մեջ նշված ակտիվների արժեքների տեսակարար կշիռներից ելնելով, որոնք կիրառվում են տվյալ հիմնական միջոցի՝ հարկային հաշվառման նպատակով որոշված մնացորդային արժեքի նկատմամբ:

Հարց

Իրավաբանական անձի լուծարման դեպքում առաջանում է, արդյոք, շահութահարկի գծով որևէ պարտավորություն:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման դեպքում հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի բաժնետոմսերի (փայերի) դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնեմասի հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով: Այսինքն՝ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկի պարտավորություն չի առաջանում:

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս ընկերության վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները նվազեցվո՞ւմ են, արդյոք, համախառն եկամտից:

Պատասխան

Հարկվող շահույթը որոշելիս ընկերության վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով նվազեցվում են համախառն եկամտից:

Հարց

Վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում վարձակալի կողմից վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերի չամորտիզացված մնացորդը ինչպե՞ս է հաշվի առնվում շահութահարկի հաշվարկման առումով:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդը չի նվազեցվում վարձակալի համախառն եկամտից, ինչը հանգեցնում է հարկային և հաշվապահական հաշվառման տարբերության առաջացմանը:

Հարց

ՊՈԱԿ-ներին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը ինչպե՞ս են հաշվի առնվում:

Պատասխան

Հիմնադրի կողմից անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ՊՈԱԿ-ին ամրակցված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների մասով համախառն եկամտից նվազեցումներ չեն կատարվում, իսկ դրանց վրա կատարված

ծախսերը (ընթացիկ, կապիտալ) հաշվի են առնվում վարձակալի համար վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) համար սահմանված կարգով:

Հարց

«Ա» կազմակերպությունը վարձակալել է փոքր տարածք առանց դառնալու տվյալ տարածքի կենսագործունեությունն ապահովող կոմունալ ծախսերի ենթաբաժանորդ, քանի որ դրա կադարման համար պահանջվում են լրացուցիչ ծախսեր: Նման պայմաններում վարձատրում կարո՞ղ է վարձակալից ստանալ կադարած կոմունալ ծախսերի փոխհատուցում:

Պատասխան

Նշված պարագայում կոմունալ վճարները պայմանագրով պետք է ներառվեն վարձակալական վճարի մեջ (որպես վարձավճարի փոփոխուն մաս), որից հարկերը հաշվարկվելու են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Հարց

Ապրանքների անհատույց մատակարարման դեպքում հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները դիտվու՞մ են, արդյոք, որպես ծախս՝ հարկվող շահույթը որոշելիս:

Պատասխան

Հարկվող շահույթը որոշելիս ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները համախառն եկամտից չեն նվազեցվում:

Հարց

Հաշվետու տարում հիմնական միջոցի վրա կատարվել են ընթացիկ ծախսեր, որոնք գերազանցում են դրա սկզբնական արժեքի 10 տոկոսը: Շահութահարկը հաշվարկելիս ի՞նչ կարգով են դրանք նվազեցվում համախառն եկամտից:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի և ԼՂՀ կառավարության 15.08.2000թ. N 165 որոշման համաձայն՝ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը տարբերակվում են ըստ հայտանիշների և (կամ) չափերի: Ըստ հայտանիշների տարբերակման անհնարինության դեպքում տարբերակումն կատարվում է ըստ չափերի: Բնութով ընթացիկ ծախսերը հիմնական միջոցի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում վերագնահատված արժեքի) 10 տոկոսը գերազանցելու դեպքում՝ 10 տոկոսի չափով տվյալ հաշվետու տարում դիտվում է որպես ընթացիկ ծախս, իսկ 10 տոկոսը գերազանցող մասը՝ միացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին և ամորտիզացվում օրենքով սահմանված ժամկետներում:

Հարց

Ի՞նչ սկզբունքով է անհրաժեշտ առաջնորդվել կազմակերպության շահութահարկը հաշվարկելիս, եթե հիմնադրի կողմից վարձակալված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքները, ինչպես նաև վարձավճարների մասով պարտավորությունները փոխանցվում են առևտրային կազմակերպությանը:

Պատասխան

«Վարձակալության պայմանագրով նախատեսված վարձակալի իրավունքների և պարտավորությունների փոխանցման» պայմանագրով առևտրային կազմակերպությանը փոխանցվող պարտավորությունների գծով վերջինիս շահութահարկի հաշվարկման համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ սկզբունքներով.

ա) «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով՝ համապատասխանաբար ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Այսինքն, կազմակերպության կողմից մինչև վերը նշված պայմանագրի ուժի մեջ մտնելը առկա պարտքի մարման դեպքում այն չի կարող նվազեցվել այդ կազմակերպության համախառն եկամտից:

բ) «Բեզդիենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի համաձայն՝ ծախսերի թվին են դասվում վարձակալված հիմնական միջոցների դիմաց վարձակալական վճարները և վարձակալության հետ կապված այլ ծախսումները: Նշված դրույթը կիրառելի է նաև ենթավարձակալության պայմանագրի շրջանակներում կատարված ծախսերի նկատմամբ:

Հարց

Ընկերությունը հարկային մարմնին հայտարարագրած հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն ընտրել է հիմնական միջոցների ամորտիզացիոն ավելի երկար ժամկետ, քան նախատեսված է «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով: Տվյալ պարագայում ընկերությունը կարո՞ղ է, արդյոք, փոփոխել քաղաքականությունը և հիմնական միջոցների ամորտիզացիան իրականացնել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված նվազագույն ժամկետներում՝ ներկայացնելով շահութահարկի հաշվարկի ճշգրտումներ:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները: Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն՝ տվյալ խմբի համար այդ հոդվածով սահմանված ժամկետներից ոչ պակաս: ՀՀՄՍ 16-ի համաձայն՝ ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը պետք է վերանայվեն առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները պետք է հաշվառվեն որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի: Այլ կերպ, նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից ավելի երկար ժամկետ ընտրված լինելու դեպքում, կարող է սահմանվել ամորտիզացիոն նոր ժամկետ («Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված նվազագույն ժամկետից ոչ պակաս) միայն առաջիկա հաշվետու ժամանակաշրջան(ներ)ի համար:

Հարց

Շահութահարկի հաշվարկման առումով ինչպիսի՞ն է «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետում նշված «բացասական տարբերության» համախառն եկամտից նվազեցման կարգը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան առաջացող ավելացված արժեքի հարկի բացասական տարբերությունը հաշվանցման ենթակա չէ (բացառությամբ այն դեպքերի, երբ բացասական տարբերությունն առաջանում է օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կարգավորող մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման արդյունքում): Շահութահարկով հարկման առումով հաշվանցման ոչ ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների՝ համախառն եկամտից նվազեցումը կատարվում է հետևյալ կարգով.

ա) նվազեցման ենթակա են ավելացված արժեքի հարկի միայն այն գումարները, որոնք վերաբերում են անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերին.

բ) ձեռքբերումների գծով ծախսագրումը կատարվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան.

գ) սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

Հարց

ԼՂՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների միջև կնքված ապրանքների փոխադրման պայմանագրի համաձայն ոչ ռեզիդենտ կազմակերպությունը ԼՂՀ ռեզիդենտին պատկանող ապրանքները Աթենքից տեղափոխել է մինչև ՀՀ Բազրապաշենի մաքսային կետ: ԼՂՀ ռեզիդենտ կազմակերպությունը, որպես հարկային գործակալ, կրու՞մ է, արդյոք, աղբյուրի մոտ շահութահարկի հաշվարկման պարտավորություն:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ռեզիդենտի կողմից տրանսպորտային ծառայությունների մատուցումից (այն մասով, որը վերաբերում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փաստացի փոխադրմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ՀՀ) տարածքով) ստացված եկամուտները համարվում են ստացված ղարաբաղյան աղբյուրներից: Ընդ որում, եթե ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված հաշիվներից պարզ չէ, թե տրանսպորտային ծառայությունների արժեքի որ մասն է վերաբերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ՀՀ) տարածքում այդ ծառայությունները մատուցելուն, ապա ոչ ռեզիդենտի կողմից այդ գործունեությունից ստացված եկամուտներն ամբողջությամբ համարվում են ղարաբաղյան աղբյուրներից ստացված եկամուտներ և ԼՂՀ ռեզիդենտը պարտավոր է վճարման աղբյուրի մոտ ամբողջ գումարից պահել և բյուջե փոխանցել շահութահարկ 4 տոկոս դրույքաչափով:

Հարց

Ո՞ր դեպքերում ՊՈԱԿ-ները շահութահարկ վճարող չեն հանդիսանում:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՊՈԱԿ-ները շահութահարկ վճարող չեն հանդիսանում բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե (պետական, համայնքների) փոխանցվող եկամուտների մասով:

Բյուջետային հատկացումներից բացի ստացվող այլ եկամուտների մասով ՊՈԱԿ-ները չեն հանդիսանալու շահութահարկ վճարող, եթե այդ եկամուտները դրանց ստացման բյուջետային տարում ամբողջությամբ փոխանցվում են համապատասխան բյուջե, այսինքն՝ եթե եկամուտները պետական կամ համայնքների բյուջե փոխանցումները հաստատող վճարման հանձնարարականներով ակցեպտավորվել են համապատասխան բյուջե բանկի կողմից այդ եկամուտների ստացման բյուջետային տարում:

Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը շարունակելու (եզրափակիչ շրջանառություն) դեպքում բյուջետային տարին ընդգրկելու է նաև այդ ամիսը՝ եզրափակիչ շրջանառության մեջ ներառվող բյուջետային հատկացումների և այլ եկամուտներին վերաբերող փոխանցումների մասով:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների համաձայն՝ ՊՈԱԿ-ների անհատույց ստացված ակտիվները եկամուտ չեն համարվում, և, համապատասխանաբար, դրանց գծով կատարված ծախսերը ծախս չեն դիտվում:

Հարց

Հարկման առումով ո՞ր ծախսերն են համարվում ներկայացուցչական:

Պատասխան

Ներկայացուցչական ծախսեր են համարվում հարկատուի կատարած այն ծախսերը, որոնք կապված են փոխշահավետ համագործակցություն հաստատելու և այն պահպանելու նպատակով բանակցություններ վարելու համար այլ հարկատուների ներկայացուցիչների, ինչպես նաև հարկատուի խորհրդի ու վերստուգիչ հանձնաժողովի նիստին մասնակցելու համար այլ մասնակիցների ընդունման և սպասարկման հետ: Այդ ծախսերի մեջ մասնավորապես ներառվում են ներկայացուցիչների /մասնակիցների/ պաշտոնական ընդունելության /նախաճաշ, ճաշ կամ այլ համանման միջոցառում/, նրանց տրանսպորտային և հյուրանոցային ապահովման, կուլտուրական միջոցառումների կազմակերպման, բանակցությունների և կուլտուրական միջոցառումների ծրագրի ժամանակ բուֆետային սպասարկման, հուշանվերների, կազմակերպության հաստիքացուցակում չգտնվող թարգմանիչների ծառայության վճարման հետ կապված ծախսերը: